



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 104/13-Ը « 06 06 2022

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ (ԿՐԿՆԵԼՈՒ) ԿԱՐԳԸ ԵՎ ԿՃԱՐԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի N1197-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1282-Ն հրամանի պահանջները, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ.

1. Երևանի պետական համալսարանում ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ քննություն(ներ)ը չհանձնած կամ «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիների ընթացքում թույլատրվում է վերահանձնել (կրկնել) ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը, ինչպես նաև վերահանձնել ամփոփիչ քննություն(ներ)ն այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտական ուսումնական տարում գործող ուսումնական պլաններով:

2. Սահմանել, որ ամփոփիչ քննությունների վերահանձնումը (կրկնումը) կատարվում է միայն այն առարկաներից, որոնց քննությանն ուսանողը չի ներկայացել կամ ստացել է «անբավարար» գնահատական:

3. Սահմանել, որ ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված շրջանավարտին թույլատրվում է նոր պաշտպանություն՝ նախկինում հաստատված թեմայով և ղեկավարով կամ տրվում է նոր թեմա և նշանակվում է նոր ղեկավար:

4. Սահմանել, որ ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը կատարելու և պաշտպանելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են ավարտական ուստարվա 1-ին կիսամյակում (ղեկտեմբեր-հունվար ամիսներին):


5. Ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզերի վերահանձնման համար սահմանել հետևյալ վճարաչափերը՝

- ա. ամփոփիչ քննության հանձնում՝ 25 000 ՀՀ դրամ,
- բ. ավարտական աշխատանքի կատարում և պաշտպանություն՝ 150 000 ՀՀ դրամ,
- գ. մագիստրոսական թեզի կատարում և պաշտպանություն՝ 250 000 ՀՀ դրամ:

6. Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց հարգելի պատճառով չներկայացած շրջանավարտին թույլատրվում է նոր պաշտպանություն՝ անվճար հիմունքներով:

7. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2012թ. ղեկտեմբերի 18-ի «Երևանի պետական համալսարանում ամփոփիչ քննությունները, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը վերահանձնելու (կրկնելու) կարգը և վճարաչափերը սահմանելու մասին» թիվ 234/20 հրամանը:

8. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ  Վ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ